



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Բյուրական համայնք, Դովի. Շիրազի N 13,
էլ. փոստ՝ Byuravanigyuxapetaran@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

N12-Ն

26 նոյեմբեր 2013թ.

ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014Թ-Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱՎԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքով

Բյուրական համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Բյուրական համայնքի վարչական տարածքում 2013 թ. համար սահմանել
տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույթա չափերը.

1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական
նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվու-
թյան համար տեղական տուրքը սահմանել.

Հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,
այդ թվում՝ այգեգործական տների,ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր
մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների
համար --- 5000դրամ.

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար --- 4000դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար ---- 4000դրամ.

բգ/ 1001 --3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների

համար --- 6000 դրամ.

ԲՊ/ 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների

համար -10000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 1000դր.
դ/20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար- 2000դր.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն --- 1000 դրամ

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքների նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող կառույցների հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափերը կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող կառույցների շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է --- 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ - 2500 դրամ

2. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական

շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակ համար՝ - 2500 դրամ

5. Համայնքի տարածքում՝

ա/ Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար -- 350 դրամ. 1քմ համար

բ/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է --150000դրամ :

գ/ Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 30000 դրամ:

6. Համայնքում աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու համար մասնակցության վճար սահմանել -- 2000 դրամ :

7. Համայնքում աղբահանությունը կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչի համար վճար սահմանել - 0 դրամ :

1, 2, 3 կետերի համար կիրառված է 0.5 գործակիցը :

Ավագանու անդամներ՝

Գեղամ Մալխասյանը *Կոչմ ԳԽ*
Հենրիկ Հովհաննիսյանը *Կոչմ ԳԽ*
Շահանդուխտ Մնացականյանը *Կոչմ ԳԽ*
Պավլուշա Ղազարյանը *Կոչմ ԳԽ*
Վրեժ Խաչատրյանը *Կոչմ ԳԽ*
Վահե Գևորգյանը *Կոչմ ԳԽ*
Վալերի Լևոնյանը *Կոչմ ԳԽ*

ԲՅՈՒՐԱՎԱՆ ՀԱՍՏԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՆ



Գեղամ Մալխասյան Գ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/